ՄԻՋԴԱՒԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՔԵՍԱՊՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ[1]

ՎԱՀՐԱՄ ՀՈՎԵԱՆ
vhovyan@yandex.ru

Քեսապը ժամանակակից Սիրիայի հիւսիս-արեւմուտքում, Միջերկրականի ափին գտնուող, Թուրքիային սահմանակից հայկական բնակավայր է: Այն գաւառակ է, բաղկացած Քեսապ աւանից (գիւղաքաղաք) եւ յարակից տաս գիւղերից: Քեսապը համարւում է պատմականօրէն հայաբնակ երկրամաս, քանի որ հայերը Անտիոքում եւ նրա շրջակայքում հաստատուել են դեռեւս Տիգրան Մեծի (Ք.ա. 95-55) ժամանակներից[2]: Դարերի ընթացքում Քեսապը այնքան է յագեցել հայկական շնչով ու մշակութային երանգներով, այնքան է հարազատացել հայութեանը, որ այն անգամ դիտւում է որպէս հայոց պատմական հայրենիքի մի մասը:

Քեսապը միշտ էլ եղել է Սփիւռքի, մասնաւորապէս՝ Մերձաւոր Արեւելքի ամենակենսունակ եւ առանցքային հայկական համայնքներից մէկը եւ տուել է բազմաթիւ նշանաւոր գործիչներ ինչպէս Սփիւռքին, այնպէս էլ Հայաստանին: Մասնաւորապէս, յիշատակման արժանի է ծնունդով քեսապցի սկզբում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս (1983-94), իսկ այնուհետեւ ամենայն հայոց կաթողիկոս (1995-99) Գարեգին Առաջինը[3]:

Հայոց Ցեղասպանութեան նախօրէին Քեսապում առկայ էին հայութեան բոլոր դաւանական շերտերը: Գերակշիռ մեծամասնութիւնը կազմում էին հայ առաքելականները: Նրանց կողքին կային նաեւ հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքներ: Որպէս առանձին դաւանական շերտ կարելի է դիտել նաեւ լատինածէս հայ կաթողիկէներին, որոնց անուանում են «հայկական ծագումով լատիններ»:

---

[1] Յօդուածը պատրաստուել է Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի առթիւ Սուրբ Էջմիածնի Գէորգյան հոգեւոր ճեմարանում 2015 Ապրիլի 7ին անցկացուած «Մերձաւոր Արեւելքի հայ հոգեւորականութեան առաքելութիւնը Հայոց Ցեղասպանութեան տարիներին» խորագրով միջազգային գիտաժողովում հեղինակի ներկայացրած զեկոյցի հիման վրայ:

[2] «Սիրիա», *Հայ սփիւռք հանրագիտարան*, Երեւան, «Տիգրան Մեծ» հրատ., 2003, էջ 508: Անտիոքում եւ յարակից վայրերում հայերի վաղ ներկայութեան մասին մանրամասն տե՛ս՝ Յակոբ Չոլաքեան, *Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)*, տպ. կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2006, էջ 27-31:

[3] Մանրամասն տե՛ս՝ Գարեգին Ա Սարգիսեան, *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, «Տիգրան Մեծ» հրատ., Երեւան, 2002, էջ 199-200:

Ընդհանրապէս որպէս Հայոց Ցեղասպանութեան իրականացման ժամանակաշրջան ընդունուած է համարել 1894-96՝ համիտեան ջարդերից մինչեւ 1923ը ընկած ժամանակաշրջանը: Ինչ վերաբերում է Քեսապին, ապա, սոյն աշխատութեան մէջ մենք անդրադառնում ենք ցեղասպանական երկու դրուագի.-

1. *1909ի ջարդերին:* Թէեւ 1909ի ջարդերն ընդունուած է անուանել Ատանայի կոտորած, իրականում դրանց աշխարհագրական սահմանները շատ աւելի լայն եւ ընդգրկուն էին, քան միայն Ատանայի վիլայէթը: Դրանք իրականում ընդգրկում էին ամբողջ Կիլիկիան եւ Անտիոքը[4], եւ Քեսապն էլ նոյնպէս զերծ չմնաց 1909ի արհաւիրքից:

2. *1915ի տեղահանութեանը եւ դրան յաջորդած տարիների իրադարձութիւններին:* 1915ին Օսմանեան կայսրութեան բոլոր հայաբնակ շրջանների նման Քեսապը ենթարկուեց Ցեղասպանութեան արհաւիրքներին՝ ջարդերին, աւերածութիւններին եւ տեղահանութիւններին:

Պատահական չէ, որ 2014 Մարտ ամսին Քեսապի դէմ իրականցուած յարձակումը[5] - որի հետեւանքով ամբողջ քեսապահայութիւնը տեղահանուեց եւ մօտ երեք ամիս ապրեց գաղթականի կարգավիճակում – քեսապցիների կողմից ընկալուեց որպէս Քեսապի երրորդ ցեղասպանութիւն՝ նկատի ունենալով մինչ այդ՝ Ի. դարի սկզբին (1909 եւ 1915), տեղի ունեցած երկու ցեղասպանական արհաւիրքները:

Հայութեան դաւանանքային հատուածների միջեւ համագործակցութիւնը անկախ նրանց միջեւ յարաբերութիւնների մակարդակից եւ որակից միշտ էլ եղել է: Այն ընդգրկել է հասարակական կեանքի բազմաթիւ բնագաւառներ՝ քաղաքական, մշակութային, կրթական, ընկերային եւն.: Ընդհանուր առմամբ եւ մասնաւորապէս՝ Հայոց Ցեղասպանութեան տարիներին, այդպիսի համագործակցութեան հիմքում ընկած են հետեւեալ հանգամանքները.-

- *Ընդհանուր ազգային պատկանելութիւնը:* Անկախ դաւանանքային տարբերութիւններից, հայ կաթողիկէները եւ հայ աւետարանականները միշտ էլ իրենց համարել են հայութեան անբաժանելի մասը: Նրանց մօտ ազգային պատկանելութիւնը միշտ էլ գերակայող է եղել դաւանանքային պատկանելութեան նկատմամբ: Ինչպէս նշում է գրող Ռաֆֆին. «... *Դաւանութիւնների բազմատեսակութիւնը չէ ոչնչացնում ազգային միութիւնը, միութիւնը պէտք է որոնել այդ մասների ներդաշնակութեան մէջ, որի հիմնական* ***մոթիւը*** *(ընդգծումը՝ ըստ բնագրի - Վ.Հ.) պէտք է լինի* ***ազգայնու-***

---

[4] «Ադանայի կոտորած 1909», *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1*, Յ. Մեղապարտի անուան պոլիգրաֆկոմբինատ, Երեւան, 1974, էջ 68:

[5] Յակոբ Չոլաքեան, *Քեսապի երեք օրերը (21-23 Մարտ 2014)*, «Էդիթ Պրինտ» հրատ., Երեւան, 2014. նաեւ՝ Վ. Հովեան, «Քեսապի իրադարձութիւնները. հայեացք Երեւանից», *Գլոբուս*, 4:2014, էջ 52-62:

թիւնն *(ընդգծումը՝ ըստ բնագրի - Վ.Հ.) իր բարձր նշանակութեամբ*»[6]: Ռաֆֆու սոյն խօսքերը կարծես նշանաբան լինեն հայութեան կաթողիկէ եւ աւետարանական հատուածների համար: Ազգային ընդհանուր պատկանելութեանը գումարւում է նաեւ կրօնական՝ քրիստոնէական ընդհանուր պատկանելութեան գիտակցութիւնը: Անկախ դաւանանքային տարբերութիւններից հայ առաքելականները, կաթողիկէները եւ աւետարականները գիտակցում են ընդհանուր հաւատին՝ քրիստոնէութեանն իրենց պատկանելութիւնը, եւ դա թերեւս գերակշռութիւն ունի դաւանանքային տարբերութիւնների նկատմամբ: Ինչպէս մի առիթով նշել է Դամասկոսի հայ աւետարանական եկեղեցու հոգեւոր հովիւ, պատուելի Տաթեւ Պասմաճեանը «*Կարեւորը հայ քրիստոնեայ լինելն է: ...Վերջում, երբ Աստծու մօտ գնանք, չի հարցնելու՝ աւետարանակա՞ն ես, թէ՞ առաքելական*»[7]: Չխորանալով աստուածաբանական եւ եկեղեցաբանական խնդիրների մէջ, այնուամենայնիւ, այստեղ աւելորդ չէր լինի մէջբերել նաեւ Պօղոս առաքեալին. «... կան պաշտամունքի զանազանութիւններ, բայց Տէրը նոյնն է»[8]:

- *Խնդիրների ընդհանրութիւնը:* Անկախ դաւանանքային տարբերութիւններից հայութեան յարանուանական հատուածների առջեւ ծառացած են եղել միեւնոյն խնդիրներն ու մարտահրաւէրները: Ուստի, ընդհանուր խնդիրները միասնական ջանքերով աւելի արդիւնաւէտ լուծելու անհրաժեշտութիւնն էլ դարձել է կենսատու հիմք՝ հայ առաքելականների, կաթողիկէների եւ աւետարանականների միջեւ համագործակցութեան: Այս հանգամանքը առաւել եւս վերաբերում է Ցեղասպանութեան ժամանակահատուածին, երբ դրուած էր ամբողջ ազգի (նրա բոլոր դաւանանքային շերտերով հանդերձ) գոյութեան հարցը: Կարո՞ղ է լինել ընդհանուր խնդիրների առկայութեան աւելի մեծ ապացոյց, քան այն, որ Ցեղասպանութեան տարիներին հայ առաքելականների հետ միասին հաւասարապէս կոտորածների ու տեղահանութեան են ենթարկուել նաեւ հայ կաթողիկէներն ու աւետարականները, հայ առաքելական եկեղեցիների եւ այլ շինութիւնների հետ միասին աւերուել ու հրկիզուել են նաեւ հայ կաթողիկէ եւ աւետարական եկեղեցիները եւ այլ շինութիւնները (դպրոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւն.): Ինչպէս նշում է Չոլաքեանը, 1909ին Քեսապի դէմ իրականացուած յարձակման ժամանակ «*Խուժանը կը հրկի-*

---

[6] Ռաֆֆի, «Ի՞նչ կապ կայ մեր եւ Տաճկաստանի հայերի մէջ», *Երկերի ժողովածու, հ. 11*, «Նայիրի», Երեւան, 1991, էջ 292:

[7] «Հարցազրոյց Հայ Աւետարանական Եկեղեցու Դամասկոսի հովիւ, պատուելի Տաթեւ Պասմաճեանի հետ», Արաքս Փաշայեան, *Դամասկոսի հայ համայնքը. ներկան եւ հեռանկարը*, «Նորաւանք» ԳԿՀ տեղեկագիր, 23:2008, էջ 33-34:

[8] «Պօղոս առաքեալի առաջին թուղթը կոռնթացիներին», Գլուխ ԺԲ, *Նոր Կտակարան, Առաքելական թղթեր*, Մայր աթոռ Ս. Էջմիածնի տպարան, Էջմիածին, 1975, էջ 469:

զէ դպրոցները, լատինաց վանքը, կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիները: Վերջինը գրեթէ հիմնովին կը քանդեն»[9]: Իդէպ, ոճրագործի (թուրքի) կողմից կոտորածների ու տեղահանութեան ժամանակ հայ առաքելականների, կաթողիկէների եւ աւետարանականների միջեւ խտրականութիւն չդնելը լրացուցիչ վկայութիւն է վերջիններիս՝ միեւնոյն ազգին (հայութեանը) եւ կրօնին (քրիստոնէութեանը) պատկանելու մասին: Դա վկայում է որ ցեղասպանողների կողմից նոյնպէս հայ կաթողիկէները եւ աւետարանականները ընկալուել են որպէս հայութեան անբաժանելի մաս:

Հարկ է նշել, որ Ցեղասպանութան ժամանակահատուածն ունէր իր իւրայատկութիւնը, եւ վերջինս ենթադրում էր միջդաւանական համագործակցութեան համապատասխան ձեւեր եւ ուղիներ: Ցեղասպանութեան տարիներին հայկական ինչպէս հոգեւոր, այնպէս էլ աշխարհիկ կառոյցների առջեւ դրուած էին հետեւեալ երեք հիմնական խնդիրները.

1. Արհաւիրքի կանխում.
2. Պայքար՝ արհաւիրքի հետեւանքները նուազագոյնի հասցնելու.
3. Արհաւիրքից յետոյ վերականգնողական աշխատանքներ (վերադարձ տարագրութիւնից, սկզբնական շրջանում կենսական խնդիրների լուծում եւն.):

Այս երեք հիմնական խնդիրներն էին դրուած Քեսապի հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հոգեւորականութեան առջեւ ինչպէս 1909ի, այնպէս էլ 1915ի ջարդերի ու տեղահանութեան ժամանակ: Դրանց արդիւնաւէտ լուծման նպատակն էլ ընկած էր յիշեալ ժամանակներում Քեսապում Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիների միջդաւանական համագործակցութեան հիմքում:

Արհաւիրքի կանխում

Արհաւիրքի կանխման գործում առաւելագոյնը, որ կարող էին անել քեսապահայ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնները, բանակցութիւններն էին տեղի թուրքական իշխանութիւնների եւ օտարերկրեայ դիւանագիտական ներկայացուցիչների հետ՝ հայկական բնակավայրերի նկատմամբ յարձակումները կանխելու, իսկ յարձակման դէպքում դրանք պաշտպանելու նպատակով:

Յատկապէս 1909ի կոտորածի ժամանակ արհաւիրքի կանխման հարցում հիմնական շեշտը դրւում է թուրք տեղական իշխանութիւնների հետ բանակցութիւնների վրայ՝ երկու հիմնական պատճառով՝

ա. Ուժերի խիստ անհաւասարութեան պատճառով հայերը չէին կարող լուրջ դիմադրութիւն ցոյց տալ թշնամուն: Ինչպէս ցոյց տուեցին յետագայ իրադարձութիւնները, Քեսապի դէմ յարձակման ժամանակ թշնամու մօտ 30.000անոց ուժերի դէմ (կանոնաւոր բանակը՝ մօտ 5000, եւ ոչ-կանո-

---

[9] Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Ա. հատոր*, «Արեւելք», Հալէպ, 1995, էջ 92:

նաւոր զինուած խմբաւորումները միասին վերցրած) քեսապցիները ստիպուած էին ինքնապաշտպանութեան դիմել մօտ 300 կռուողներով:

Բ. 1908ի երիտթուրքական յեղափոխութիւնից ոգեւորութեան ալիքը յարաշարժութեան ուժով դեռ պահպանւում էր: Հայերը հաւատում էին, որ երիտթուրք իշխանութիւնները, հաւատարիմ մնալով յեղափոխութեան կարգախօսներին, կ'երաշխաւորեն իրենց անվտանգութիւնը: Այդ պատճառով էլ արհաւիրքի նախօրէին հայերի զգօնութիւնը թուլացել էր, ինչի դրսեւորում էր այն, որ քեսապցիները նախապէս չէին ձեռնարկել ինքնապաշտպանութեան միջոցառումներ՝ զէնքի հայթայթում, պաշտպանական ամրութիւնների կառուցում եւն.: Հետեւաբար, Քեսապի դէմ իրականացուած յարձակման ժամանակ քեսապցիները ոչ միայն քանակապէս էին զիջում թշնամուն, այլ նաեւ սպառազինութիւնների եւ այլ տեսակէտերից:

Քանի որ արհաւիրքի կանխման միակ հնարաւոր տարբերակը տեղի թուրք իշխանութիւնների հետ բանակցութիւններն էին, ապա միջդաւանական համագործակցութիւնն էլ պէտք է դրսեւորուէր այս ասպարէզում: Այդ համագործակցութեան դրսեւորման հիմնական ձեւը միասնական պատուիրակութիւնների ձեւաւորումն էր՝ բանակցութիւնների նպատակով: 1909ի ջարդերի նախօրէին, անհանգստացած շրջակայ հայկական բնակավայրերում տեղի ունեցած իրադարձութիւններով եւ Քեսապի վրայ մօտալուտ յարձակման մասին լուրերով, տեղի հայոց հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդները ձեւաւորում են պատուիրակութիւն Օրդուի կառավարչի հետ հանդիպելու, մօտալուտ յարձակումների մասին լուրերի վերաբերեալ նրանից բացատրութիւններ լսելու, ինչպէս նաեւ յարձակման դէպքում Քեսապը պաշտպանելու նպատակով պետական զինուած ուժեր խնդրելու համար: Պատուիրակութեան մէջ Քեսապի հոգեւոր առաջնորդներից ընդգրկուած էին Պօղոս քահանայ Աթիկեանը, լատինաց վանքի վանահայր հայր Սափաթինօն եւ միքանի ներկայացուցիչ էլ աւետարանական համայնքից[10]: Թէեւ, ինչպէս ցոյց տուեցին յետագայ իրադարձութիւնները, տեղի թուրք իշխանութիւնների հետ բանակցութիւնները չյանգեցրին էական արդիւնքի, այնուամենայնիւ, նման ներկայացուցչական կազմով պատուիրակութեան ձեւաւորումը արդէն իսկ վկայում է վտանգի պահին թէկուզ բնազդաբար հայոց դաւանանքային շերտերի համախմբման եւ համագործակցութեան մասին:

Իսկ 1915 Յուլիսի 27ին, Քեսապից հայ բնակչութեան գաղթը կանխելու համար, կրկին պատուիրակութիւն է ձեւաւորւում, թէեւ աւելի պակաս ներկայացուցչական կազմով, Հալէպ մեկնելու եւ, ի թիւս այլոց, տեղի գերմանական հիւպատոսի հետ բանակցելու նպատակով: Պատուիրակութեանը

[10] Սոյն աշխատանքում ներկայացուած այս եւ միւս փաստերը վերցուած են սիրիահայ հայագէտ Յակոբ Չոլաքեանի՝ նախորդ տողատակում վկայակոչուած *Քեսապ* հիմնարար աշխատութեան էջ 89-122 հատուածից:

անդամակցում են Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցու քահանայ տէր Պօղոս Աթիկեանը եւ աւետարանական համայնքի հովիւ վերապատուելի Տիգրան Գունտաքճեանը:

Համագործակցութեան մէկ այլ ձեւ էր Քեսապի ճակատագրի, ընդհանուր անելիքների վերաբերեալ քննարկումներին համատեղ մասնակցութիւնը: Այսպէս, 1915 Յուլիսի վերջին, երբ յայտնի է դառնում քեսապահայութեան տեղահանման օսմանեան կառավարութեան որոշումը, շրջանի հայ երեւելիները Սերգօ աղայի տանը անցկացնում են գիշերային հանդիպում-քննարկում՝ որոշելու քեսապահայութեան ճակատագրի հետ կապուած կենսական նշանակութեան հարցեր (օրինակ՝ դիմադրութեան կազմակերպման նպատակայարմարութեան հարցը): Այդ հանդիպում-քննարկմանը մասնակցում են Աթիկեան քահանան, բժիշկ Աւետիս Ինճեճիկեանը (աւետարանական) եւ ուրիշներ:

Մի խօսքով, Ցեղասպանութեան ժամանակ արհաւիրքի կանխման ասպարէզում հայկական յարանուանութիւնների միջեւ համագործակցութիւնը դրսեւորուել է քեսապահայութեան՝ լայն ներկայացուցչութիւն ունեցող կարճատեւ կառոյցների (օրինակ՝ պատուիրակութիւնների) աշխատանքներին անհատական եւ հաստատութենական մակարդակով համատեղ մասնակցութեան ձեւով: Աղէտի կանխման ասպարէզում, կարելի է ասել, որ գործադրուած ջանքերը մեծ հաշուով ցանկալի արդիւնք չեն տուել. հնարաւոր չի եղել առաջքն առնել քեսապահայութեան գլխին կախուած արհաւիրքին: Սակայն մեր խնդիրն է այստեղ ոչ թէ գնահատել գործադրուած ջանքերի արդիւնաւէտութիւնը, այլ ցոյց տալ աղէտի ժամանակ հայութեան տարբեր շերտերի համախմբման եւ միասնական գործողութիւնների փաստը:

Պայքար արհաւիրքի ժամանակ վնասը նուազագոյնի հասցնելու համար

Այս ասպարէզում, միջդաւանական համագործակցութիւնը դրսեւորւում էր գաղթի ճանապարհին կամ ժամանակաւոր ապաստանութեան վայրերում աղէտեալների վիճակը թեթեւացնելու նպատակով համատեղ ջանքերի գործադրմամբ: Այսպէս, 1915ի տեղահանութեան ժամանակ քեսապահայութեան գաղթականներից մէկում՝ Համայում, յոգնածութիւնից, քաղցից, ծարաւից, հիւանդութիւններից ուժասպառ եղած գաղթականների դրութիւնը բարելաւելու նպատակով հայ առաքելական հոգեւորական տէր Ներսէս Թաւուքճեանը եւ աւետարանական վերապատուելի Գունտաքճեանը հանգանակութիւններ են կազմակերպում:

Իդէպ, հարկ է նշել, որ հենց հոգեւորականներն էին գլխաւորում գաղթականների կարաւանները եւ անգամ գաղթի ժամանակ իրականացնում հայութեանն առաջնորդելու իրենց առաքելութիւնը: Ընդ որում, միջդաւանական տարբերութիւնների ջնջման եւս մէկ փաստ է այն, որ գաղթի ժա-

մանակ հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հոգեւորականներից իւրաքանչիւրը չէր ղեկավարում միայն իր համայնքը: Նրանք ղեկավարում էին ամբողջ գաղթականների կարաւանները, որոնց մէջ էին ե՛ւ հայ առաքելականները, ե՛ւ կաթողիկէները, ե՛ւ աւետարանականները: Ընդհանուր քեսապահայութեան հետ միասին կրելով գաղթի ողջ զրկանքներն ու դժուարութիւնները՝ հայ հոգեւորականներից շատերը նոյնպէս դառնում են Ցեղասպանութեան զոհ: Այսպէս, Համայի գաղթականում վախճանւում են Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցու քահանայ Աթիկեանը, իսկ Նոյեմբերի 27ին ծանր հիւանդութիւնից յետոյ՝ նաեւ վերապատուելի Գունտաքճեանը: Ահա թէ ինչ է գրում տէր Ներսէս քահանան իր օրագրում վերապատուելի Գունտաքճեանի մահուան կապակցութեամբ, որը բնութագրում է ե՛ւ վերապատուելիի անձը, ե՛ւ այդ շրջանում ծաւալուած համագործակցութիւնը առաքելական եւ աւետարանական հոգեւորականների միջեւ. «*Գործունեայ, մարմնով առողջ, անկեալներուն ծառայել սիրող, գործ եփել դարձնել գիտցող, բողոքական հասարակութեան մէջ համակրութիւն ունեցող մէկն էր: Համայի մէջ վերջին քանի մը ամիսներուն գաղթականներուն մեծ ծառայութիւններ մատոյց եւ մեր հոն գտնուած ատենը միշտ կը գործակցէր մեզի հետ ու միշտ գոհ կը մնայինք իր գործունէութենէն*»[11]:

Միջդաւանական համագործակցութեան դրսեւորում էր նաեւ այն, որ յարանուանութիւններից իւրաքանչիւրը իր ջանքերը եւ հնարաւորութիւնները գործադրում էր ոչ միայն սեփական անդամների, այլեւ - անկախ եկեղեցական պատկանելութիւնից - բոլոր աղէտեալների կարիքները գոհացնելու կամ նրանց փրկելու համար: Այլ կերպ ասած՝ հայկական եկեղեցիներից իւրաքանչիւրը իր գործունէութիւնը ծաւալում էր ոչ միայն իր նեղ համայնքի, այլ ամբողջ հայ բնակչութեան շրջանում կամ փոքրաթիր մակարդակով ծաւալում էր համազգային գործունէութիւն: 1909ի ջարդերի ժամանակ Քեսապի շրջանի Ներքին Պաղճաղազ գիւղի լատինաց վանքը փախուստի ճանապարհին ժամանակաւոր ապաստան դարձաւ էքիզօլուք եւ Վերին Պաղճաղազ գիւղերի ողջ հայ բնակչութեան համար: Իսկ դրանից յետոյ լատին վարդապետները առաջնորդեցին փախստական հայերին Լաթաքիա: Իսկ ջարդերի հետեւանքով Լաթաքիա տեղափոխուած հազարաւոր քեսապցիներ տեղաւորւում են, ի թիւս այլ տեղերի, հայոց հոգետանը, լատինաց վանքում, ամերիկեան միսիոնարների կենտրոններում:

Եւս մէկ ուշագրաւ փաստ, որ վկայում է ոչ-այնքան միջդաւանական համագործակցութեան, որքան տարբեր դաւանանքների ներկայացուցիչ հայերի՝ միմեանց նկատմամբ տածած կարեկցութեան եւ միմեանց ճակատագիրը կիսելու պատրաստակամութեան մասին: Այսպէս, հայերի մէջ

[11] Մէջբերումը՝ ըստ նոյն տեղում, էջ 107:

պառակտում առաջացնելու, ինչպէս նաեւ եւրոպական պետութիւններին մոլորութեան մէջ գցելու նպատակով թուրքական իշխանութիւնները յետաձգում են հայ կաթողիկէների եւ աւետարանականների գաղթը՝ կեղծ լուրեր տարածելով, թէ վերջիններս չեն տեղահանուելու[12]: Սակայն 1915 Յուլիսի 30ին, երբ սկսում է Գարատուրան գիւղի հայ առաքելական համայնքի գաղթը, աւետարանական համայնքի մեծամասնութիւնը կազմող Սաղտճեան գերդաստանի ընտանիքները, չցանկանալով բաժանուել իրենց համագիւղացիներից, եւ ազգակիցների ճակատագիրը կիսելու պատրաստակամութեամբ, միանում են գաղթողներին:

Վերականգնողական աշխատանքներ

Աղէտից յետոյ իրականացուող վերականգնողական աշխատանքները միտուած էին տարագիրների վերադարձի կազմակերպմանը, աւերուած շինութիւնների վերակառուցմանը, կարիքաւորներին օգնութեան տրամադրմանը, մինչեւ կեանքը բնականոն հունի մէջ մտնելը բնակչութեան առօրեայ կենսագործունէութեան կազմակերպմանը եւն.: Ահա այս խնդիրների շուրջ էլ իրականացւում էր միջյարանուանական համագործակցութիւնը Քեսապում:

1909ի կոտորածից յետոյ, երբ քեսապահայերը վերադարձան իրենց հարազատ բնակավայրերը, թուարկուած խնդիրներն իրենց սրութեամբ ցցուեցին հայ հոգեւոր եւ աշխարհիկ կառոյցների ու առաջնորդների առջեւ:

Կոտորածի հետեւանքով, ինչպէս նշում է Չոլաքեանը, մինչ այդ ոչ այնքան ծանօթ շրջանը մեծ հետաքրքրութիւն սկսեց իրենից ներկայացնել: Ամէն տեղից թէ՛ հայկական եւ թէ՛ օտարերկրեայ բարեգործական կազմակերպութիւններ շտապեցին օգնութիւն տրամադրել աղէտեալներին: Նպաստ է հասնում անգամ Կ. Պոլսի հայոց պատրիարքութիւնից, ՀԲԸՄ Գահիրէի կենտրոնական վարչութիւնից:

Ամբողջ տարածաշրջանում (Կիլիկիա եւ Անտիոք) ստեղծւում են նպաստից ստացման եւ բաշխման յանձնաժողովներ, որոնց ղեկավարութիւնը ստանձնում է Բերիոյ թեմի առաջնորդական տեղապահ Շահէ Ծ. վրդ. Գասպարեանը: Քեսապում նոյնպէս ստեղծւում է այդպիսի յանձնաժողով, որի աշխատանքներին ներգրաււում են հայկական տարբեր եկեղեցիների ներկայացուցիչները: Այսպէս, յանձնաժողովի անդամներ էին տէր Մովսէս

---

[12] Իդէպ, թուրք պատմաբանների կողմից շրջանառութեան մէջ դրուած այն կեղծ թեզը թէ՝ կաթողիկէ եւ աւետարանական հայերը չեն ենթարկուվել ջարդերի իրենց դաւանանքային պատկանելութեան շնորհիւ, եւ որին որոշակի տուրք են տալիս նաեւ հայկական շրջանակներ, հիմնւում է սոյն հանգամանքի վրայ (Ա. Սիմաւորեան, «Թուրքիայի հայ կաթողիկէ համայնքը»՝ Ա. Սիմաւորեան, Վ. Հովեան, *Հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ*, «Նորաւանք» ԳԿՀ, Երեւան, 2012, էջ 19-22, 28):

Ծ. վրդ. Ոսկերիչեանը, Աթիկեան քահանան, հայր Սափաթինօն, վերապատուելի Գունտաքճեանը, միսիոնարուհի օրիորդ Չէյմպըրսը եւ ուրիշներ:

Յանձնաժողովի գործունէութեան արդիւնքում հիմնւում են որբանոց եւ այրիանոց: Հայր Սափաթինօն իր խնամակալութեան տակ է վերցնում 200 որբերի, քանի որ կոտորածների հետեւանքով յատկապէս 6-7 տարեկան որբ երեխաների թիւը բաւականին մեծ էր: Այրիացած կանանց աշխատանքով ապահովելու համար հիմնւում է հիւսուածեղէնի փոքրիկ գործարան:

Վերականգնողական շրջանում պակաս կարեւոր չէր նաեւ հոգեբանական աջակցութիւնը աղէտեալներին: Այս տեսակէտից կարեւոր նշանակութիւն ունէին յատկապէս բարձրաստիճան հոգեւոր գործիչների այցելութիւնները աղէտեալ բնակավայրեր եւ ոգեւորիչ ելոյթները: Յատկանշական է այն, որ 1909ի ամռանը՝ ջարդերից յետոյ, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Խապայեանը եռօրեայ այցելութիւն է իրականացնում Քեսապ, քարոզում տեղի հայ առաքելական եւ աւետարանական եկեղեցիներում, իրականացնում ազգային վարժարանի նոր շէնքի հիմնարկէքի արարողութիւնը, այնուհետեւ, մեկնելով Լաթաքիա, հայ ժողովրդի անունից երախտագիտութիւն է յայտնում տեղի իշխանութիւններին ու բարեգործական կազմակերպութիւններին այնտեղ ապաստանած հայերին ցուցաբերուած աջակցութեան համար:

Ինչ վերաբերում է 1915ի տեղահանութիւնից յետոյ վերականգնողական աշխատանքներին, ապա պէտք է նշել, որ 1918 Հոկտեմբերի 30ին Մուտրոսի զինադադարի կնքումից եւ առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտութիւնից յետոյ տարագրուած քեսապահայերը սկսեցին աստիճանաբար վերադառնալ եւ վերահաստատուել իրենց նախկին բնակավայրերում: Սակայն վերադարձից յետոյ էլ ամէն ինչ հարթ ու հանգիստ չէր: Նախ առաջացել էին անվտանգութեան հետ կապուած խնդիրներ՝ երկու պատճառով.

1. 1920ին կազմացրուեց հայկական լեգէոնը[13], որը Մերձաւոր Արեւելքի հայ բնակչութեան անվտանգութեան երաշխաւորն էր:

2. Քեմալական շարժումից ոգեւորուած տեղաբնակ թուրքերը սկսել էին ոտնձգութիւններ կատարել քրիստոնեաների, այդ թւում նաեւ՝ հայերի նկատմամբ:

Այս մարտահրաւէրներին դիմակայելու նպատակով Քեսապում նախկին լեգէոնականներից եւ նոր կամաւորներից ստեղծւում է զինուորական իշխանութիւն, որը կարողանում է իրականացնել շրջանի պաշտպանութիւնը թուրքերի յարձակումներից: Այդ ինքնապաշտպանական կռիւներին

[13] «Արեւելեան լեգէոն», *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2*, Յ. Մեղապարտի անուան պոլիգրաֆկոմբինատ, Երեւան, 1976, էջ 33:

մասնակցում էին Քեսապի բոլոր յարանուանութիւնները: Օրինակ, ինչպէս վկայում է Չոլաքեանը[14], Վերին եւ Ներքին Պաղճաղազ եւ Չաթալլէք գիւղերի ինքնապաշտպանական կռիւներին մասնակցում էին լատինաց վանքի[15] ուսուցիչ Ծերոն Պետրոսեանը եւ խոհարար Պօղոս Պէօճիքեանը:

Իսկ առօրեայ կեանքը կազմակերպելու նպատակով զինուորական իշխանութեան կողմից Հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիների ներկայացուցիչներից կազմում է Ազգային միութիւն (ԱՄ), որը ստանձնում է հայաբնակ շրջանի կենսապահովման գործը: Վերջինիս խնդիրներն էին կազմակերպել Քեսապի հոգեւոր եւ կրթական կեանքը, զբաղուել նորաստեղծ եւ նոր վերադարձող ընտանիքների տեղաւորման հարցերով, որբերի եւ այրիների խնամքով, անտէր մնացած կալուածքների օգտագործման, ժառանգութեան եւ այլ հարցերով:

ԱՄն այդ ժամանակ, արդարեւ, հանդիսանում էր Քեսապի քաղաքացիական իշխանութիւնը: Նրա կողմից Քեսապի ներքին կեանքում կարգուկանոն հաստատելու նպատակով անգամ ստեղծւում են ոստիկանութիւն եւ դատարան՝ անկարգութիւններն ու յանցագործութիւնները կանխելու, յանցագործներին պատժելու, վէճերը հարթելու համար: ԱՄն կարողանում է հմուտ կերպով իրականացնել նաեւ հայկական եւ ոչ-հայկական բարեսիրական կառոյցների տրամադրած օգնութեան ստացումն ու բաշխումը:

Կրթական գործը գլուխ բերելու խնդրով ԱՄն հիմնում է հայ առաքելական եւ աւետարանական համայնքների միացեալ վարժարանների ցանց: Երկու միացեալ վարժարաններ (մէկը՝ աղջիկների եւ միւսը՝ տղաների համար) հիմնւում են Քեսապում 1920ին: Իսկ Քեսապի յարակից գիւղերում մինչեւ 1923 հիմնւում են երկսեռ միացեալ նախակրթարաններ: Որպէս ենթակառուցուածքներ օգտագործւում են աւետարանական եւ ազգային նախկին վարժարանների շէնքերը: Միացեալ վարժարաններին մեծ օգնութիւն են ցուցաբերում վերակազմաւորուած Ուսումնասիրաց ընկերութիւնը եւ ՀԲԸՄն:

Ընկերային խնդիրների լուծման առումով ԱՄն ստացուած դրամական օգնութեան մի մասն էլ օգտագործում է սերմացուի ձեռքբերման (ժողովրդին բաժանելու նպատակով) համար: Հիմնւում է նաեւ որբանոց, ուր ապաստանում են նաեւ ոչ-քեսապցի որբեր:

Քեսապի պաշտպանութիւնն ապահովելու նպատակով գումարներ են յատկացւում նաեւ զէնքի ու զինամթերքի հայթայթման համար:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ Քեսապում ծաւալուող վերականգնողական աշխատանքների վրայ իր բարերար ազդեցութիւնն ունեցաւ Կիլիկիայում ազգային կեանքի վերազարթօնքը 1919-21՝ Ֆրանսական ռազմակալման շրջանում:

---

[14] Չոլաքեան, էջ 118:

[15] Վանքը գտնւում էր Վերին Պաղճաղազ եւ Չաթալլէք գիւղերի միջեւ:

Վերջում հարկ է աւելացնել, որ ներկայում էլ Մերձաւոր Արեւելքում ծաւալւում են փոթորկայոյզ գործընթացներ, որոնք ունեն ցեղասպանական բնութագիր[16]: Արդ, ինչպէս նախորդ դարասկզբի Ցեղասպանութեան տարիներին, այժմ էլ հայութեան փրկութեան նպատակով հրատապ խնդիր է հայկական եկեղեցիների միջեւ համագործակցութիւնը, ինչի համար կարեւոր նշանակութիւն ունի անցեալի փորձի արժեւորումը:

INTERCONFESSIONAL COOPERATION IN KESAB DURING THE YEARS OF THE ARMENIAN GENOCIDE

(Summary)

VAHRAM HOVYAN
vhovyan@yandex.ru

In spite of some confessional differences, the consciousness of belonging to the same nation and religion – the Armenian nation and Christianity – Christianity has always predominated among Apostolic, Catholic and Evangelical Armenians. This fact has been a serious reason for close cooperation between Armenian Apostolic, Catholic and Evangelical churches in various spheres, due to the commonality of problems as well.

The article aims to show through the example of the small district of Kesab the interconfessional cooperation in the Armenian reality during the most complicated period of the Armenian Genocide. The historical facts of the time include the massacres in Cilicia in 1909, World War I (1914-1918) and the following years. The author outlines the cooperation between the Armenian Apostolic, Catholic and Evangelical churches of the time in three areas: a) prevention of disaster, b) struggle to minimize the harm during disaster and c) recovery efforts.

[16] Տե՛ս, օրինակ՝ Էմմա Բեգիջանեան, «Թուրքական մանեւրներ սիրիական խնդրում», *Հայաստանի Հանրապետութիւն*, 20.01.2023: